

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

13.11.2017թ. ԿՆՔԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-8/2017-ԸՆ-4

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

«06» փետրվար 2018թ.

«Արանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության պատմաբանության ոլորտի վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և մի կողմից, և «Սիստեմ ԲՈՒՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է. Պողոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 04.12.2017թ.-ի թիվ 1367-Ա հրամանը, ինչպես նաև Կողմերի միջև 13.11.2017թ. կնքված N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-8/2017-ԸՆ-4 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Ճարտարել պայմանագրի 5.1 կետը հետևյալ խմբագրմամբ «5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 286 698 000 (երկու հարյուր ութսունվեց միլիոն վեց հարյուր ինսունույթ հազար) ՀՀ դրամ, որից 47 783 000 (քառասունյոթ միլիոն յոթ հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամը (մեկը 2017թ.-ին նախատեսված աշխատանքների գինը կազմում է 113 153 351 (մեկ հարյուր տասներեք միլիոն հինգ հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝ 2017թ. ըն նախատեսված աշխատանքների գինը կազմում է 157 863 934 (մեկ հարյուր հիսունյոթ միլիոն ութ հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ մնացածը ժամանակատախսան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը»:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2018թ.-ին իրականացվելիք աշխատանքների ծավալաբանության համաձայն հավելված 1-ի (կցվում է):

1.3 Հաստատել Համաձայնագրի 2018թ.-ին իրականացվելիք աշխատանքների օրացուցակի մասին համաձայն հավելված 2-ի (կցվում է):

1.4 Հաստատել Համաձայնագրի 2018թ.-ի վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 3-ի (կցվում է):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդրաստում է Պայմանագրի անբաժանելի մասը:


2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները, որ պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմից ստրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Արանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն»
«Ք. Երևան, Կոլովանյան 28»
«ՀՀ Կողմարձակական վարչություն»



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սիստեմ ԲՈՒՍ» ՍՊԸ
«Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Խամոջյան»
ՀԿՀ 02565518
ՀՀ 1930011971



Ծավալաթերթ նախահաշիվ

Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ289+650-կմ291+450 հատվածի միջին նորոգման աշխատանքներ

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալ	Միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեքը (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6
I Երթևեկելի մաս					
2	Ֆրեզում $h_{միջ}=5$ սմ, տեղափոխում 1կմ միջ. հեռ. և փոսայցում	մ ²	264	1160	306240
3	Փոսային նորոգում $h=3-5$ սմ	մ ²	127,7	6380	814726
4	Խճային հիմք $h=16$ սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ ²	մ ²	600,45	3630	2179634
5	Մանրահատիկ ա/բ $h=4$ սմ	մ ²	13119,3	5244	68797609
6	Խոշորահատիկ ա/բ $h=6$ սմ	մ ²	4998,7	7247	36225751
Ընդամեն					108323960
II. Կողնակներ և կողային առուներ					
1	Կողնակների հարթում զրեղերով	մ ²	5793,65	19	108341
2	Կողնակների լրացում ավազային բնահողով $h=10$ սմ	լ ²	5793,65	295	1709127
3	Կողային առուների մաքրում	գծմ	1662	539	895818
Ընդամեն					2713286
III. Իջատեղեր					
1	Աճ քայքայված ծածկի քանդում $h_{միջ}=12$ սմ էրսկավատորով 0.65մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ	մ ²	95	212	20140
2	Հողային պաստառի հարթում բուլդոզերով	մ ²	415	18,7	7761
3	Խողովակների փոտրակների 10eIV բնահողի քանդում էքս. 0,65մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ ³	7	1767	12369
4	10eIV բնահողի քանդում ձեռքով, կողքի կուտակում	մ ³	1,3	5560	7228
5	d= 325 մմ խողովակի տեղադրում ($\delta=5$ մմ)	գծմ	32	43800	1401600
6	Միաձույլ բետոնե գլխամաս B-20	մ ³	1,31	122900	160999
7	Գլխամասերի ջրամեկուսացում	մ ²	10,7	1250	13375
8	Մետ. 325 մմ խողովակի ջրամեկուսացում	գծմ	29	1870	54230
9	Ավազակույզային շերտ $h=10$ սմ	մ ³	1,28	5710	7308,8
10	Չեստադարձ լիցք	մ ³	1,3	1900	2470
11	Խիճ $h=12$ սմ	մ ²	510	1744	889440
12	Մանրահատիկ ա/բ $h=5$ սմ	մ ²	545	6420	3498900
Ընդամեն					6075820

IV. B-2-20 հավաքովի վաքեր					
1	10eIV բնահողի քանդում էքս. 0,65մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ ³	40	1770	70800
2	10eIV բնահողի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ ³	5,37	7290	39147,3
3	B-2-20 հավաքովի վաքերի տեղադրում	մ ³	34,9	142750	4981975
4	Վաքերի ջրամեկուսացում	մ ²	331,55	1250	414437,5
5	Մեռ. d=273/2 մմ կիսախողովակի տեղադրում	զծմ	6	18175	109050
6	Մեռ. d=273/2 մմ կիսախողովակի հենակների բևտոն B20	մ ³	0,16	63500	10160
7	Հենակների որմնակապային ամրան ø14 A500C	կգ	1,45	920	1334
8	Ավազակոպճային շերտ h=10սմ (հենակ և վաք)	մ ³	17,5	5710	99925
Ընդամեն					5726829
V. 30x34սմ հավաքովի վաքեր					
1	10eIV բնահողի քանդում էքս. 0,65մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 2կմ	մ ³	17	1770	30090
2	10eIV բնահողի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ ³	2,5	7300	18250
3	Միաձույլ բետոնե եզրաքարերի քանդում բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 2կմ	մ ³	5,4	7800	42120
4	30x34սմ վաքերի տեղադրում	մ ³	6,24	269080	1679059
5	Վաքերի ջրամեկուսացում	մ ²	98,28	1250	122850
6	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ ³	3,9	5710	22269
7	Անվտանգության նպատակով բետոնյա 15x30սմ եզրաքարերի տեղադրում	զծմ	48	6790	325920
Ընդամեն					2240558
VI Արգելափակոցներ					
1	Ուղղորդ սյուների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	15	4200	63000
2	Նոր ուղղորդ սյուների տեղադրում	հատ	10	16350	163500
3	Նոր մետաղյա արգելափակոցների տեղադրում	զծմ	976	31100	30353600
Ընդամեն					30580100
VII 289+834 կմ-ում d 1,0 մ է/բ խողովակի վերանորոգում					
1	Տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորող ճան. նշանների պատրաստում և տեղադրում հետագա կազմատումով. Նախազգուշացնող – 1.23 և 1.30 (4 հատ): Առավելության – 2.6 և 2.7 (2 հատ): Վերադարձ 50%:	հատ	6	39880	239280
2	Մուտքի գլխամասի քայքայված քարային շարվածքի կազմատում 0.65 մ ³ շերտի տարողությամբ էքսկավատորով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ ³	2,1	1770	3717
3	Նույնը ձեռքով:	մ ³	0,2	7300	1460
4	Գլխամասի և թևերի հիմքերի իրականացման համար փոստրակի փորման հողային աշխատանքներ 0.65 մ ³ շերտի տարողությամբ էքսկավատորով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա - 10e IV:	մ ³	21,4	1770	37878
5	Նույնը կողքի կուտակումով - 10e IV:	մ ³	16,3	700	11410
6	Նույնը ձեռքով ձեռքով գրունտի կողքի գցումով - 10e IV:	մ ³	4,0	5550	22200


7	Մուտքում Լօղակի ապամոնտաժում կողքի պահեստավորումով, հետագա տեղադրումով:	մ ³	0,345	88580	30560
8	Գլխամասի և թևերի հիմքերի տակ ավազակոպճային շերտի տեղադրում-h=10սմ	մ ³	0,88	5700	5016
9	Գլխամասի հիմքի և իրանի իրականացում միաձույլ բետոնով - B20:	Ս ³	8,88	122910	1091441
10	Թևերի հիմքերի իրականացում միաձույլ բետոնով - B20:	Ս ³	4,06	73910	300075
11	Թևերի իրանների իրականացում միաձույլ բետոնով - B20:	Ս ³	7,62	76530	583159
12	Գրունտի հետ շփվող մակերևույթների երկշերտ քսվածքային ջրամեկուսացում:	Ս ²	34,0	1250	42500
13	Խողովակի մաքրում ձեռքով գրունտի տեղափոխումը դեպի ելք մինչև 25մ հեռավորության վրա, պատգարակով:	մ ³	1,56	7790	12152
14	Ելքում գլխամասի ներքևի սեկցիայի ողողված տեղամասի վերականգնում միաձույլ բետոնով - B20:	Ս ³	1,10	76530	84183
15	Ելքում գլխամասի մնացած մակերևույթների վերանորոգում ցեմ. Շաղախով M200 h=3սմ:	Ս ²	16,40	2740	44936
16	Փոսորակի հետլիցք բուլդոզերով կողքի պահեստավորված բնահողից: Տեղադրումը շերտ-շերտ ջրի լցաբաշխումով 10e IV:	Ս ³	19,7	850	16745
17	Փոսորակի հետլիցք ձեռքով կողքի գրունտից, տեղադրումը շերտ-շերտ ջրի լցաբաշխումով 10e IV :	մ ³	2,0	1900	3800
				ԸՆդամեն	2530512
VIII 290+008 կմ-ում d 1,0 մ ե/բ խողովակի վերանորոգում					
1	Տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորող ճան. նշանների պատրաստում և տեղադրում հետագա կազմատումով. Նախազգուշացնող – 1.23 և 1.30 (4 հատ): Առավելության – 2.6 և 2.7 (2 հատ): Վերադարձ – 50%:	հատ	6	39880	239280
2	Գլխամասի և կարգավորիչ թևերի իրականացման համար փոսորակի փորման հողային աշխատանքներ 0.65 մ ³ շերտի տարողությամբ էքսկավատորով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա-10e IV:	մ ³	19,78	1770	35010,6
3	Գլխամասի և կարգավորիչ թևերի իրականացման համար փոսորակի փորման հողային աշխատանքներ 0.65 մ ³ շերտի տարողությամբ էքսկավատորով կողքի կուտակումով-10e IV:	մ ³	22,0	700	15400
4	Նույնը ձեռքով ձեռքով գրունտի կողքի գցումով-10e IV:	մ ³	4,6	5550	25530
5	Ելքում հունի մաքրում կենցաղային աղբից ձեռքով, աղբի բարձումը կոնքով ա/ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ ³	2,1	8370	17577
6	Ելքում հունի և խողովակի մաքրման հողային աշխատանքներ ձեռքով գրունտի տեղափոխումը պատգարակով հունով ներքև մինչև 25 մ հեռ. վրա:	մ ³	10,78	7800	84084
7	Մուտքում Լօղակի ապամոնտաժում 5տ բ.բ. ավտոմեքանիքով կողքի պահեստավորումով և հետագա տեղադրումով:	մ ³	0,345	88580	30560

8	Գլխամասի և թևերի հիմքերի տակ ամազակոպճային շերտի տեղադրում-հ=10սմ	մ ³	0,8	5710	4568
9	Գլխամասի հիմքի և իրանի իրականացում միաձույլ բետոնով - B20:	Ս ³	8,9	122910	1091441
10	Թևերի հիմքերի իրականացում միաձույլ բետոնով - B20:	Ս ³	3,5	73910	258685
11	Թևերի իրանների իրականացում միաձույլ բետոնով - B20:	Ս ³	6,6	76530	505098
12	Գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային երկշերտ ջրամեկուսացում:	Ս ²	33,8	1250	42250
13	Փոսորակի հետլիցք բուլդոզերով: Տեղադրումը շերտ-շերտ ջրի լցաբաշխումով -10e IV:	Ս ³	24,1	850	20485
14	Փոսորակի հետլիցք ձեռքով կողքի գրունտից -10e IV: Տեղադրումը շերտ-շերտ ջրի լցաբաշխումով:	մ ³	2,5	1900	4750
Ընդամեն					2374719
IX կմ 290+216-ում 1x2.6 մ սխեմայով ե/բ կամրջի վերանորոգում					
1	Հենարանների վնասված տեղամասերի երկայնքով խրամուղու փորման հողային աշխատանքներ ձեռքով կողքի զցումով - 8աII, հ= 10սմ:	մ ³	0,3	5550	1832
2	Հենարանների և կարգավորիչ թևի վնասված տեղամասերի վերանորոգում միաձույլ բետոնով -B20	Ս ³	2,3	75550	176032
3	Հենարանների և կարգավորիչ թևի մակերևույթների վերանորոգում ցեմ. Շաղախով M200 հ=5սմ:	Ս ²	140,3	3760	527528
4	Կամրջատակ հունի մաքրում քարերից տեղափոխումը պատգարակով դեպի ելք մինչև 25 մ հեռ. վրա:	Ս ³	0,7	7970	5579
Ընդամեն					710970
X կմ 291+162-291+230-ում հենապատի վերանորոգում					
1	Հենապատի հիմքի երկայնքով խրամուղու փորման հողային աշխատանքներ ձեռքով կողքի զցումով -6bII:	մ ³	2,0	2130	4345
2	Գոյություն ունեցող հենապատի վրա անցքերի գայլիկոնում. L ₁ =0.25 մ, & 40սմ:	հատ	102,0	1400	142800
3	Խարսխային ձողերի տեղադրում, &12 A500c L ₁ 0.4 մ, n=102 հատ: Ցեմ. շաղախ - 0.02 մ ³ :	տ	0,0363	942150	34200
4	Հենապատի աճեցման և ամրացման միաձույլ ե/բ: Ամրան &6.5 AI - 0.3853 տ:	Ս ³	44,88	81680	3665798
Ընդամեն					3847144
XI կմ 291+283-ում 2.5,2.5մ բացվածքով ուղղանկյուն ե/բ խողովակի վերանորոգում					
1	Խողովակի մոտքում քանդված ծածկի հավաքովի սալերի ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռավորության վրա: Չափ. 3.6x3.5x0.35 մ:	մ ³	8,82	9370	82643,4
2	Քարային շարվածքով պատերի կիսափլված հատվածների կազմատում էքս. 0.65 մ ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ ³	8,4	1790	15036

3	Փլված պատերի բարերի բարձում հունից էքս. 0.65 մ ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ ³	26,4	1790	47256
Ընդամեն					144935
XII Պատերի նորոգում					
1	Հավաքովի բետոնյա բլոկների ճեղքի լրացում բետոնով B20 (խիճ<20մմ)	Մ ³	0,2	76600	15320
2	Բետոնյա պատի իրանի նորոգում միաձույլ բետոնով B20	Մ ³	0,4	76600	30640
3	Պատերի սվաղում ցեմենտային շաղախով 5սմ	Մ ²	212	3760	797120
Ընդամեն					843080
XIII Ջրընդունիչ և մետ. ցանց կմ 290+317					
1	Փոսորակի փորում ձեռքով կողքի կուտակումով		0,9	5550	4995
2	Փոսորակի փորում էքս.0,65մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ ²	4,5	1770	7965
3	Ջրընդունիչ վաքի ցանց ամրան Ø 25մմ Ac-500 1գծմ-3.853կգ (ցանց) Անկյունակ L 70x7մմ 1գծմ-7.392 կգ (ցանց) Անկյունակ L 63x6մմ 1գծմ-5.717 կգ (ցանց)	տ	0,8846	873200	772433
4	Ն/բ ջրընդունիչ վաք (բետոն B-20) ամրան Ø 12մմ Ac-500 -159.57 կգ ամրան Ø 8մմ Ac-500 -29.63 կգ	մ ³	1,65	192900	318285
5	Ալյազակալոպճային շերտ h=10սմ	մ ³	1,05	5900	6195
6	Քավածրային ջրամեկուսացում	մ ²	10,5	1250	13125
7	Հետյիցք ձեռքով	մ ³	1,2	1900	2280
Ընդամենը					1125278
Ընդհանուր					167 237 190
միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.					


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՆՊՐԱՆՍԱՊՐՈՒԻ ԿԵՐԿԻ ԵՎ ԻՆՋԵՆԵՐԻՆԳԻՆԳՆԵՐԻ ԿԱՎԻՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»
 «ՇԵՐԵՆԱՆ, ՆԱՅՐԱՆՈՂՅԱՆ 28»
 «ՖՎ Գործառնական վարչություն»

ՀՎՀՀ 02565518
 ՀՀ 90001012136


ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սիսիանի ԲՈՒՍ» ՍՊԸ
 «Սյունիքի մարզ.ք. Սիսիան, Խանջյան 2
 «Կոնվերս բանկ» ՓԲԸ

ՀՀ 09802793
 ՀՀ 19300179110100



ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**Ա/Ճ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ289+650-կմ291+450
 հատվածի միջին նորոգման միջին նորոգման աշխատանքների
 (2018թ.)**

Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
	սկիզբը	ավարտը
Ճանապարհային պատվածք	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրացույցային օր հետո	20.12.2018թ.
Ջրահեռացում	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրացույցային օր հետո	20.12.2018թ.
Արհեստական կառուցվածքներ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրացույցային օր հետո	20.12.2018թ.
Կողնակների ամրացում	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրացույցային օր հետո	20.12.2018թ.
Անվտանգության էլեմենտներ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրացույցային օր հետո	20.12.2018թ.
ԸՆԴՀԱՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրացույցային օր հետո	20.12.2018թ.


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
 «Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Խանջյան 2
 «Կոնվերս րանկ» ՓԲԸ
 ՀՎՀՀ 09800793
 ՀՀ 1930017910100



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
 «Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Խանջյան 2
 «Կոնվերս րանկ» ՓԲԸ
 ՀՎՀՀ 09800793
 ՀՀ 1930017910100




ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

		Աշխատանքի													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	45231176/1	Ա/6 Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ 289+650-կմ 291+450 հատվածի միջին նորոգման և ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	-	157 700 430	157 700 430	157 700 430	157 700 430	157 700 430	157 700 430	157 700 430	157 700 430	157 700 430	157 863 934	157 863 934	157 863 934


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Արանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն»
 ՀՀ ք. Երևան, Եսաբանյան 28,
 ՀՀ ՖԼ Գործառնական վարչություն

ՀՎՀՀ 02565518
 ՀՀ 900010912136


ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
 ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Խանջյան 2
 «Կոնվերս բանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ 09802793
 ՀՀ 193001179110100


ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ
ԶՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՏԿՆ-ՔՄԱՇՁԲ-8/2017-ԸՆ-4»

ք. Երևան

«13» «նոյեմբերի» 2017թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է. Պողոսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ա/ճ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ289+650-կմ291+450 հատվածի միջին նորոգման և ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրանց համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին. Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների համապատասխան:

1.3 Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1.1-ով նախատեսված 2017 թվականին իրականացվելիք Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև՝ սույն թվականի դեկտեմբերի 15-ը, իսկ մնացած աշխատանքները կիրականացվեն համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

1.4 Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները սկսվում են Հավելված 1-ով նախատեսված միջին նորոգման Աշխատանքների հանձնման-ընդունմանը հաջորդող օրվանից հաշված 7 տարի ժամկետով: և կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 31.12.2025թ.-ը ներառյալ:

1.5 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով N 1 հավելվածում նշված միջին նորոգման աշխատանքները ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1 տարին:

1.6 Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի նախագծին, ինչպես պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին կամ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի **6.2 կետով** նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատուց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի **6.2 կետով** նախատեսված տույժը, ինչպես նաև **6.3 կետով** նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն պայմանագրով նախատեսված ժամանակետում կամ սահմանված ժամկետում չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված ժամկետները

զ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով պատվիրատուի կողմից սահմանված Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

ե) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների վերացման պահանջները ներկայացվել է երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, ըստ անհրաժեշտության կատարելով համապատասխան նվազեցումներ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N5 Հավելվածի:

3.2.4 Քննարկել և ընդունել N 6 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

3.2.5 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի Հավելված 2-ով նշված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.10 Սույն պայմանագրով նախատեսված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

3.4.11 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

3.4.12 Կապալառուն պարտավոր է ապահովել է Պայմանագրով նախատեսված ճանապարհահատավածի անվտանգ երթևեկությունը և անցանելիությունը:

3.4.13 Կապալառուն պատասխանատվություն է կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

3.4.14 պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության կամ ենթակապալառուի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3.4.15 համատեղ գործունեության (կոնսորցիում) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է, և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի N 1 Հավելվածում նշված միջին նորոգման աշխատանքները և ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանության աշխատանքները ընդունվում են առանձին:

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 7), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.1.1 N 1 Հավելվածում նշված աշխատանքները ընդունվում են N4 Հավելվածով հաստատված արձանագրությամբ՝ N7.1 Հավելվածով հաստատված պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող ակտով:

Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 (երեք) օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվող երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

4.1.2 Մինչև 05.12.2017թ. պայմանագրի 2017թ.-ին նախատեսված աշխատանքների չիրացված մնացորդային գումարն ամբողջությամբ՝ համապատասխան կանխավճարի ապահովում ներկայացնելուց հետո, Պատվիրատուն առնվազն մինչև 15.12.2017թ. փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 (քառասուն) օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, *իսկ տարածամկեպ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:*

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

4.7 Պատվիրատուի կողմից աշխատանքները փոփոխելու ընդունելու դեպքում, եթե Պատվիրատուի կողմից հայտնաբերվում են նախկինում ընդունված աշխատանքների վերաբերյալ անհամապատասխանություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի կատարել անհրաժեշտ փոփոխություններ նախկինում ընդունված աշխատանքները արձանագրած փաստաթղթերում (կատարողական ակտ, հանձնման-ընդունման ակտ և այլն)՝ այդ մասին տեղեկացնելով Կապալառուին:

Այն դեպքում, երբ նման փոփոխությունները հանգեցրել են նախկինում ընդունված աշխատանքների համար վճարված գումարի փոփոխության անհրաժեշտության, ապա Կապալառուի կողմից հերթական հանձնման-ընդունման ակտով ներկայացված աշխատանքների համար Պատվիրատուն վճարում է՝ նվազեցնելով վճարման ենթակա գումարը անհամապատասխանության չափով:

Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի կատարման համար պայմանագրի գինը վճարել է ամբողջությամբ, ապա Կապալառուն պարտավոր է վճարել Պատվիրատուին սահմանված գումարը այդ մասին պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

4.8 Եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 286 698 000 (երկու հարյուր ութսունվեց միլիոն վեց հարյուր ինսունութ հազար) ՀՀ դրամ, որից 47 783 000 (քառասունյոթ միլիոն յոթ հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, ընդ որում՝ 2017թ.-ին նախատեսված աշխատանքների գինը կազմում է 113 153 351 (մեկ հարյուր տասներեք միլիոն մեկ հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ մնացածը համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.2 Մինչև 05.12.2017թ. պայմանագրի 2017թ.-ին նախատեսված աշխատանքների չիրացված մնացորդային գումարն ամբողջությամբ՝ համապատասխան կանխավճարի ապահովում ներկայացնելուց հետո, Պատվիրատուն առնվազն մինչև 15.12.2017թ. փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

5.2 Պայմանագրով նախատեսված ընդհանուր աշխատանքների մնացած մասը կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո:

Եթե տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա հետագայում աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագրի կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով:

Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը պատվիրատուին ներկայացնում է համաձայնագրի կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: 2017 թվականին կատարված աշխատանքների մասով դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնաճակատ-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացուցով նախատեսված ամսում, իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասի կատարման մասով դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնաճակատ-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացուցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացուցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Պատվիրատուն վճարումը կատարում է մասնակիորեն, եթե չեն պահպանվել սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 5 հավելվածով սահմանված ցուցանիշները՝ այդ ցուցանիշներին համապատասխան հարաբերակցությամբ նվազեցնելով սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված գումարը:

5.6 Պայմանագրի ընթացիկ ամսռային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների գինը գործոնային է և կարող է փոփոխվել հետևյալ արտաքին գործոնների առկայության դեպքում՝

1) միջին աշխատավարձի 10 և ավելի տոկոս փոփոխության
2) ինքնարժեքի տարր հանդիսացող հումքի, էներգիայի, վառելանյութի և այլ անհրաժեշտ նյութերի գների 10 և ավելի տոկոս փոփոխության

3) Ինքնարժեքի մեջ մտնող հարկերի և ապահովագրական վճարների 10 և ավելի տոկոս փոփոխության:

5.7 Արտաքին գործոնների փոփոխությամբ պայմանավորված Պայմանագրի գինը փոփոխվում է կողմերից մեկի առաջարկությամբ և կողմերի համաձայնությամբ՝ գների վերաբերյալ վերլուծության առկայության դեպքում:

6. ԿՈՐՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 2-րդ հավելվածով նախատեսված ժամկետի պահպանման համար:

Սույն պայմանագրի N 6 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

6.8 Կապալառուն պատասխանատվություն է կրում Պայմանագրով նախատեսված աշխատանքների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասների համար:

6.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7. ԱՆՀԱՂՔԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.2 Սույն պայմանագիրն 2017 թվականին իրականացվելիք աշխատանքների մասով ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասի կատարման մասով՝ ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

